ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիսի 2015 թվականի N 86 - Ա

<<ՀԱՂԱՐԾՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, 36-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 3-րդ և 68-րդ հոդվածի 7-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի <<Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին>> թիվ 41-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. <<Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 4967000 (չորս միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ մեծությամբ կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով նվազեցնել 450000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամով: Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 4517000 (չորս միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ՝ 4517 (չորս հազար հինգ հարյուր տասնյոթ) հատ 1000 (հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
2. Հաստատել <<Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը կապված կանոնադրական կապիտալի նվազեցման հետ:
3. <<Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և կանոնադրությունում համապատասխան փոփոխությունների գրանցումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

19 մայիսի 2015թ.
ք. Իջևան